

համար կարելուր ծանօթութիւններով օժտեցի զայն. իսկ միւսներու մասին արդէն պէտք եղածները ընդհանուր կերպով խօսեցայ ուսումնասիրութեանս ընթացքին մէջ՝ երբ դիտել տուի Կոլոտին ըմբռնումը իր թարգմանել տուած գիրքերուն նկատմամբ (Տես էջ 41-61):

Կոլոտի նուիրուած այս էջերուն՝ կցուած է ժամանակագրութիւն մը, իբր խտացումը այն դէպքերուն եւ ժամանակներուն, որ կը զբաւեն իր անձն ու պաշտօնը:

մեզի վիճակեցաւ Ս. Եթոռին ախոռ դարձած զբառունը (տպագրեալ մատենից) մարքելու կարգադրելու գործը. այդ միջոցին փոշիներու տակէն ազատած եմ բազմաթիւ 100-200 տարուան նամակներ, որոց մէջ կը գտնուէին 70 ի չափ շատ կարելուր գրութիւններ, այն է՝ թղթակցութիւնք Կոլոտ եւ Շղթայակեր Պատրիարքներու ընդ միմեանս, թո՛ւմ իսկ իրենց ձեռքերով գրուած. զորս Աստուածատուր Պատմաբան եպս-ը երբեք չէր տեսած եւ կորսուած կը համարէր... — այս բոլոր նամակները վարպետութեամբ մը հին գրքերու տակ մտնուի մը մէջ պահած էին: Դամասկոս մեկնելուս... այդ բոլոր նամակները յանձնած եմ ժամանակին Սահակ Կաթ.ին, յետոյ ինչ եղան՝ չեմ գիտեր:»

— Օհ, երանի թէ ձեռքիս տակ ունենայի այդ պատուական զբառականները (տօքիւսման). տարակոյս չկայ որ շատ օգտակար պիտի ըլլային ուսումնասիրութեանս համար: Ասկից զատ Կոլոտի եւ Շղթայակեր ձեռագիրներէն նմանահանութիւններ ալ կրնայինք կցել այս էջերուն: — Բայց դեռ ատեն կայ. նախան հատորին համար կրնանք օգտուիլ ատոնցմէ՝ եթէ չնն կորսուած եւ եթէ դրուին մեր տրամադրութեան տակ ո՛ր եւ է եղանակաւ: — Վասն զի Կոլոտը լնւ հասկնալու համար իր Դպրոցը ուսումնասիրելու է, իսկ այդ Դպրոցին փայլուն ներկայացուցիչն է Նաշեան, որ իբր ատատ արտադրող մը, զօրաւոր եւ հմուտ միտք մը, թէ իր գրական եւ թէ պատրիարքական գործունէութեան մէջ կը ներկայացնէ Կոլոտին Դպրոցը եւ իր դարուն բարքերը: Այս բոլորը «Նաշեան»ի նուիրուած զատ հատոր մը պիտի կազմեն: